լով չորս հազար կարմիր դուգատ. գործադրելով վաճառականին յատուկ լեզու. «ի դառն ժամանակի, որ հայրենիքն (այսինքն կալուածը, հողը) աժան էր և ոսկին թանկ». Ստեփանոս Օրբէլեանը իւր կրտսեր եւ խորթ եղբայր Զալալից գնում է Զուայ գիւղը «իւր ամեն սահմանօքն, հողով եւ ջրով եւ այգեստանեօք եւ բոլոր բնակչօք» 21,000 դրամով(*), որ հաւասար էր 2100 ոսկի դահեկանի. քիչ յետոյ կը տեսնենք, որ Ումեկի ազգականներից մէկը՝ Յովհաննու որդի Ստեփանոսը՝ գնում է «զԽոռակերտ եւ զիր գեղեան, զայգին որ ի Շղուեր», վճարելով 60,000 սպիտակ սուլտանի, այսինքն սելջուկեան արծաթ դահեկան, որ հաւասար էր մօտաւորապէս 6000 ոսկի դրամի: Ո՛րքան եւ հետաքրքրական լինի ու կարեւոր ճշդել ԺԳ. դարու երկրորդ կիսում գործադրուող դրամներն ու նրանց արժէքը գնումների և փոխանակութիւնների համեմատութեամբ, բնականաբար, այստեղ զբաղուել չենք կարող, կարօտ լինելով յատուկ ուսումնասիրութեան: Մեր ցուցումները միայն մօտաւոր գաղափար պիտի տան Ճարի եւ նորա հօր գնումների եւ հարստութեան մասին: Պատմական տեսակէտով մի հետաքրքրական երեւոյթ է այս, որ Հայաստանի արեւմտեան գաւառներից եկած վաճառական հարուստ ընտանիքներ կալուածներ են ձեռք բերում դրամական գնումներով եւ աւատական իշխանների դասում կարգւում, ինչպէս ժամանակակից միւս իշխանները: Գետկայ վանքում 1273 թուին գրուած ձեռագրի յիշատակարանի Մխիթար գրիչը այս նոր ձեռք բերուած հողային ժառանգութիւնը անուանում է «տէրութիւն» Ճարի, մի արտայայտութիւն, որ զործածական էր միւս իշխանների համար. «Ցամի եւթն հարիւրերորդի քսաներորդի երկրորդի թուականութեանս Հաց յորում ժամանակի հովէր(?!) զուղղափառութեամբ(!) ճշմարիտ աթոռակալ լուսաւորչին մերոյ տր. Յակոբ, և յԱղուանից տր. Ստեփաննոս. եւ ի տիեզերակալութեան Ապաղանին(?!) եւ յանիշխանութեան մերո աշխարհիս, յաթաբակութեան Սադունին եւ տէրութեան տեղւոյս Ճարին: Աստանաւոր կատարեցաւ տառ մատենիս ի սբ. եւ ի հռչակաւոր վանս Գետկա ընդ հովանեաւ(?!) սբ. Աստծնիս. . . . առ ոտս սբ. եւ վրսամապայծառ վարդապետիս Յովասաբիս, որ է ամենայնիւ ուրինակ բարեաց վարիւք եւ բանիւ . . .»(*):

Ճարի արձանագրութիւնից պարզւում է և մի այլ խնդիր, Հասան Զալալի դուստր Մամախաթունը Ումեկի երկրորդ կինն էր, որից եւ կրտսեր որդին Վախտանգ. իսկ Ճարն ու Քարիմատինը նորա առաջին կնոջից էին, որ ըստ արձանագրութեան Թագուհի էր կոչւում: Որդիների մէջ աւագը, հաւանօրէն, Քարիմատինն էր, որ ժառանգել էր հօր չինած եկեղեցին Տփխիսում, իսկ երկրորդը Ճարը, որ ստացել է Գետիկը և իւր անձնական գնումով վերան աւելացրել Հովը: Վախտանգի ժառանգութեան մասին տեղեկութիւն չունինք:

Քարիմատինի, Ճարի և սորա զաւակների մասին յիշատակութիւն ունինք նաև Գետկայ ուրիշ երկու արձանագրութեան մէջ. երկու եղբայրներ, որոնցից մէկը վարդապետ է, բայց անունը եղծուած եւ միւսը կարապետ՝ «ի թվին հայոց ՉԽ պարոնութեան Խորիշ խաթունին եւ եղբարց իւրոց Արղութին եւ Թա.... ամուսին որդոց Քարիմատին եւ(?) որդոյ մեծին Ումեկին ու այլ որդոյ Խաթունին» չինում են զանգակատուն «յանուն սբ. հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի» եւ «պարիսպ չուրջ եկեղեցոյս»(**): Տարաբաղդաբար արձանագրութեան եղծուած լինելու պատճառով մնում ենք մթութեան մէջ Արղութի միւս եղբայրների եւ Քարիմատինի անուան հետ կապուած մերձաւորների մասին: Երկրորդ արձանագրութիւնը Պետրոս վարդապետինն է, որ մի խաչ է կանգնել «պարոնութեան Արղութին և Խորիշ Խաթունին» «ի թուին ՉՂԴ»(***): Արձանագրութիւններից պարզ է, որ Ճարը Արղութից և նորա եղբայրներից զատ, որ յիշուած էր նաեւ նորա մեծ արձանագրութեան մէջ, ունէր և մի դուստր Խո-

(*) Օրբէլեան. Ղուկ. հրատ. 493:

(*) Ձեռ. Երուսաղէմի N. 1288: Յովասափ վարդապետին յիշում է եւ Գանձակեցին Գետիկի առաջնորդների շարքում. Ղուկ. հրատ. եր. 210:

(**) Ազգ. Հանդ. X. 1903, Յօդ. Յարութիւնեանի:

(***) Անդ: